600.0314.16.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2016 թվականի №314Ա
քաղ. Երևան

«ԷՐԻԿ-ՆԱԶԵՆԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 31-ի №ԱԲ-2122Հ գրությունը, որով «ԷՐԻԿ-ՆԱԶԵՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ծանուցվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1 հոդվածի 2-րդ կետի հիմքով ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման համար հաշվարկված ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր դրամ գումարի չափով վճարման պարտավորությունը չկատարելու փաստի ուսումնասիրության նպատակով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 31-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի մասին, ինչպես նաև Ընկերության կողմից ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման համար հաշվարկված ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր դրամ գումարի վճարման փաստացի կատարումը, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կարճել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 31-ից Ընկերության նկատմամբ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

17.1 հոդվածի 2-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
16 նոյեմբերի 2016թ.
ժամը 16 ՀՀ